



# ՍՈՑ. ՑԱՆՑԵՐ

# Ի՞նչ էն

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ



Սոցիալական ցանցերը համացանցային հարթակներ կամ կայքեր են, որոնք նախատեսված են սոցիալական փոխհարաբերությունների համար: Դրանք ընդհանուր հետաքրքրություններ ունեցող մարդկանց վիրտուալ համայնքներ են: Օգտվողները այս ցանցերում շփվելու և ինքնաարտահայտվելու հնարավորություն են ստանում հաղորդակցության տարբեր՝ chat, messaging, blog, էլեկտրոնային փոստ, տեսանյութ գործիքների միջոցով:

Ցանցերը կառուցվել են հետևյալ սկզբունքով՝ ցանցի հիմնադիրները հրավիրում են մարդկանց միանալ, նոր անդամները նոր մարդկանց են հրավիրում և այդպես շարունակ: Ինքնաբերաբար յուրաքանչյուր օգտատեր դառնում է ծանոթների հսկայական շղթայի մի մաս: Աամները կարող են ունենալ նաև իրենց սեփական էջերը:

## Մի փոքրիկ պատմություն

Սոցիալական ցանցերը համացանցում իրենց հաղթական քայլերգը սկսել են 1995 թվականին: Հենց այդ ժամանակ է հիմնադրվել ամերիկյան "Համադասարանցիներ" (Classmates.com) կայքը: Նախագիծը բավականին հաջող էր, և հետագա տարիների ընդացքում մի շարք այլ նմանատիպ նախագծեր:

Սոցիալական ցանցերն էլ ավելի պահանջարկ ունեցան 2003-2004 թվականներին, երբ ստեղծվեցին LinkedIn, Ֆեյսբուք և MySpace սոցիալական ցանցերը: Եվ եթե LinkedIn սոցիալական ցանցը ստեղծվել է գործնական հարաբերությունների սահմանման և աջակցման համար, ապա MySpace-ն ու Ֆեյսբուքը առաջին հերթին նախատեսված են սովորական օգտատերերի համար:

# ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՑԱՆՑԵՐԻ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Սոցիալական ցանցերը սովորելու, ազատ արտահայտվելու և հաղորդակցվելու հնարավորություն են տալիս: Նրանց միջոցով ձևավորվում են նաև ընդհանուր հետաքրքրություններ ունեցող ակտիվ մարդկանց համայնքներ: Օրինակ՝ նկարիչները կարող են ցուցադրել իրենց աշխատանքները, ցանկացած մարդ կարող է վաճառել կամ գովազդել իր աշխատանքի արդյունքները:

Մի կողմից սոցիալական կայքերը նպաստում են օտարացած հարազատների հետ շփմանը, տարբեր մարդկանց հետ ծանոթությանը, մյուս կողմից շատերը ձեռք են բերում «վիրտուալ թմրամոլություն»: Շատ հոգեբաններ պնդում են, որ սոցցանցերը ազդում են մարդու հոգեկան աշխարհի վրա՝ առաջացնելով դեպրեսային իրավիճակներ:

# ՈՐՈՆՔ ԵՆ ՌԻՍԿԵՐԸ




Սոցիալական ցանցերը հասարակական վայրեր են և ցուցադրվող բովանդակությունը հասանելի է ողջ հասարակությանը: Ցանկացած մարդ կարող է տարածել ոչ պատշաճ բովանդակություն և երեխան կարող է ոչ միայն զոհ դառնալ, այլ նաև ներքաշվել այլ մարդկանց դեմ ուղղված գործողությունների մեջ: Ցավոք սրտի սոցիալական ցանցերն այնպես են կառուցված, որ անձնական նկարագրերը հասանելի են օգտվողներին, և պետք է լինել հմուտ օգտվողներ անձնական տվյալները պաշտպանելու համար:

# ՈՐՈՆՔ ԵՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Այլասերված մեծահասակներ, որոնք երեխա են ձևանում
- Չկան տեխնոլոգիաներ, որոնք կարող են կանխել մեծահասակների՝ մանկա-պատանեկան ցանցերում գրանցվելը
- Անհատական տեղեկատվության տարածում, որը կարող է կեղծ լինել



- Ժամանակի վատնում, ինտերնետից կախվածություն: Երեխաները կարող են օրեր շարունակ անցկացնել ցանցերում՝ անընդհատ փոփոխելով իրենց նկարագիրը
- Ագրեսիայի դրսևորում
- Շատ կայքեր թույլ են տալիս այլ անդամների գնահատել ձեր նկարագիրը, արդյունքում կարող են հայտնվել անպարկեշտ մեկնաբանություններ



Դիտարկումները ցույց են տվել, որ անընդմեջ  
օնլայն ռեժիմում անցկացված առավելագույն  
ժամանակը եղել է 30 ժամ: Սա արդեն  
փաստում է սոցիալական ցանցերից  
կախվածության մասին: Փորձագետները,  
միաժամանակ, կախվածության այդպիսի  
բարձր աստիճանը բացատրում են  
մարդկանց ՝ շփման մեծ պահանջով: Շփումը  
կարող է լինել անվերջ և բազմաբնույթ, իսկ  
սոցիալական ցանցերը, լինելով  
գրաքննությունից դուրս միջավայր, կարող են  
բացասաբար ազդել նույնիսկ չափահաս  
մարդկանց հոգեվիճակի վրա, մինչդեռ  
օգտվողների մի հսկայական բանակ  
անչափահասներ են:



Հոգեբաններն ապացուցել են, որ վերջին ժամանակներս սոցիալական ցանցերի շնորհիվ մարդիկ ոչ թե մտերմացել, այլ ընդհակառակը, օտարացել, մեկուսացել և կարծես թե ռոբոտացել են: Մարդիկ ռեալ և իրական շփումը նախընտրում են փոխարինել ինտերնետային շփմամբ, որն էլ ավտոմատ կերպով տանում է հասարակությունից, մարդկությունից մեկուսացման, իսկ երկարատև մեկուսացումն էլ վաղ թե ուշ կատարում է «իր գործը»՝ տանելով դեպի սուիցիդալ վարք՝ ինքնասպանություն: Այն դրակա՞ն, թե՞ բացասական երևույթ է: Կշեռքի նժարի վրա դնելով նրա դրական և բացասական կողմերը միաժամանակ՝ գալիս ենք այն մտահանգմանը, որ գիտության և տեխնիկայի արագընթաց զարգացման ժամանակաշրջանում հնարավոր չէ պատկերացնել կյանքն առանց համացանցի, քանի որ նրա տված ինֆորմացիան և գիտելիքներն առավել են ցանկացած հարուստ գրադարանից, մյուս կոմից էլ տարվելով այդ ինֆորմացիայի մեծ հոսքով՝ ունենում ենք ժամանակի մեծ կորուստ և իրական շփման քաղց: Խնդրի լուծման ամենախելամիտ և ճիշտ լուծումը հետևյալն է՝ օգտվել համացանցից՝ չանտեսելով և չմոռանալով մեր հարազատների և մտերիմների հետ ռեալ շփումը, իսկ համացանցը օգտագործել որպես ինֆորմացիայի մեծ հանրագիտարան: Դարձրեք համացանցը ձեր գերին՝ հնարավորինս շատ «աշխատեցնելով» և ինֆորմացիա կորզելով նրանից, այլ ոչ թե դուր գարձեք նրա գերին՝ անմոռաց գամվելով նրա առջև:



# Ի՞նչ ԽՈՐՀՈՒՐԴ ԿԱՐԵԼԻ Է ՏԱԼ ԾՆՈՂՆԵՐԻՆ

- Բացատրեք երեխային, թե ինչու չի կարելի տրամադրել իր և ընտանիքի անդամների մասին անձնական տեղեկություններն անձանոթ օգտատերերին,
- Բացատրեք, թե ինչու է պետք զգույշ լինել կասկածելի նամակներ, կայքեր, ֆայլեր բեռնելիս և էլեկտրոնային փոստից, սոցցանցերից և այլն,
- Պատմեք, որ սոցցանցերում մարդիկ երբեմն ներկայանում են այլ կերպարներով և պետք չէ անձանոթ անձանց հետ հանդիպում նշանակել համացանցի միջոցով: Նշեք, որ նման առաջարկներ ստանալու դեպքում անհրաժեշտ է տեղեկացնել ծնողներին:
- Տան համակարգիչը տեղադրեք այնպիսի հատվածում, որ կարողանաք վերահսկել ձեր երեխայի գործողությունները,
- Պարբերաբար ժամանակ անցկացրեք ձեր երեխայի հետ համացանցում,
- Մի պատժեք երեխային համացանցում անցանկալի միջադեպերի համար, քանի որ ապագայում պատժից խուսափելու նպատակով նա կարող է թաքցնել նման դեպքերը,
- Խնդրեք նրան ցույց տալ մուտքային հաղորդագրությունները, հատկապես տհաճ պարունակությամբ,
- Երեխային սովորեցրեք չպատասխանել տհաճ կամ վիրավորական հաղորդագրություններին և էլեկտրոնային փոստով կամ սոցցանցերում:



# ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ



Այս տարվա Ապահով Համացանցի միջազգային օրը նշվելու է փետրվարի 9-ին, երեքշաբթի օրը: Այն կանցնի «Միասին՝ դեպի ավելի լավ Համացանց» խորագրի ներքո: Ինտերնետը Ձեր երեխայի համար նոր բաներ սովորելու ու ժամանցի հրաշալի վայր է, սակայն այն օգտագործելիս պետք է լինել պատասխանատու և զգույշ:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ